

ՄԵԹՐ ԳԱՍՊԱՐ ՏԵՐՏԵՐԵԱՆԻ ՅՈՒՇ ՀԱՎԱՔԸ

Posted on October 10, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



Թղթակից, Լոս Անճելըս, 9 Հոկտեմբեր 2021

Ազգային աննկուն հասարակական եւ քաղաքական գործիչ՝ Մեր Գասպար Տերտերեան իր կեանքի շրջանը ակարտեց Օգոստոս 23-ին Ճննդավայր Լիբանանի Պէյրուք մայրաքաղաքին մէջ:

ՀԲԸՄիութեան Յովակիմեան Մանուկեանի մանչերու երկրորդական վարժարանի առաջին շրջանաւարտներու դասարանին կը պատկանէր ան: Բարձրագոյն ուսումը Նախ կը ստանայ Պէյրուքի Ամերիկեան Համալսարանէն Ներս (AUB, BSc in Physics, 1957), ապա կը վկայուի Պէյրուքի St. Joseph համալսարանէն՝ իրաւագիտութեան եւ տնտեսագիտութեան բաժիններէն՝ ֆրանսական եւ լիբանանեան *լիսանսներով* (1964):

1957-ին կ'անդամակցի Լիբանանի Լրագրողներու սենտիքային, իսկ 1965-ին Պէյրուքի Փաստաբաններու Կաճառին:

Հետաքրքրութիւն ցուցաբերած է երգի, ասմունքի եւ թատրոնի հանդէպ, բայց լիովին Ներգրաւուած է յետագային՝ երկրի արաբական եւ հայ ազգային քաղաքական կեանքին մէջ, եւ նուիրուած յանձնառու հրապարակագրութեան: Բացի մայրենիէն Գ. Տերտերեան ծանօթ էր նաեւ արաբերէն, ֆրանսերէն, անգլերէն եւ որոշ չափով նաեւ լատինատառ թրքերէն լեզուներուն:

Հասարակական գործունեութեան ուրուագիծ

- Ատենապետ ՀԵԸ-ի Համալսարանական Ուսանողական Միութեան եւ ՌԱԿ Մ. Փորթուկալեան ակումբին:
- Անդամ Հայոց Եկեղեցւոյ Միասնականութեան Պաշտպան Կոմիտէի քարտուղարութեան:
- Վարած է Նախագահի պաշտօններ Լիբանանահայ «Գրական Շրջանակ»ի եւ Լիբանանի Հայ Համալսարանաւարտներու Միութեան:
- Անդամակցած է Դեմոկրատ Իրաւաբաններու Համաշխարհային Լիկայի Լիբանանի մասնաճիւղի վարչութեան, Լիբանանի Հեռատեսիլէն Հայկական Ժամի Տնօրէն Ժողովին, Լիբանանահայ Թատրոնի Ա. Խորհրդաժողովի Կազմկոմիտէի աշխտանքներուն, Մեծ Եղեռնի 60-րդ Տարելիցի Ոգեկոչման Լիբանանի Համագգային Մարմինին:
- Հիմնադիրներէն եղած է Արաբ-Հայ Օրինական Միջազգային Խորհուրդին, Դամասկոս, 12-2-2013:
- Մասնակցած է Փարիզի NIKKO պանդոկի Ա. Համահայկական Համագումարին, Թուրքիոյ Պաղեստինեան Գրողներու եւ Լրագրողներու Համագումարին (1977), Փարիզի ICOM-ի (1978), Հալէպի երեք սեմինարներուն, եւ 2001-ին՝ Ս. Էջմիածնի «Պետութիւն-

Եկեղեցի» նիւթով իրաւաբանական միջազգային ժողովին, ուր կը ներկայացներ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը:

Աշխատակցած է Պէյրութի «Չարթօնք», «Արարատ», «Ալ-Սաքաֆա Ալ-Արապիա», «Ազգային Մշակոյթ», «Կանչ», «Նայիրի», «Կամար», «Ծաղիկ», «Ազդակ», Երեւանի «Հայաստանի Կոմունիստ», Դամասկոսի « Տիրասէթ Իշթիրաքիէ» (Ընկերվարական ուսումնասիրութիւններ), «Սաուր ուլ-Շաապ» («Ժողովուրդի ծայն») թերթերուն, Armenian Studies տարեգիրքին, «Հայկազեան Հայագիտական Հանդես»ին եւ Փարիզի «Նոր Յառաջ»ին:

Հրապարակագիր Գ. Տերտերեանի լրագրական եւ հրապարակագրական գործունեութեան թագն ու պսակը կը հանդիսանան Լիբանանի «Յառաջ»ն ու «Գրական Շրջանակ»ի բազմաբովանդակալից եւ բազմանպատակ «Օրացոյց»ները:

Հանգուցեալին յուղարկաւորութիւնը տեղի ունեցած է Օգոստոս 28-ին, Պէյրութի Ս. Նշան եկեղեցւոյ մէջ:

Հոգեհանգիստ եւ յիշատակի հաւաք, Լուս Անճեւը, Ս. Պետրոս եկեղեցի



Հոկտ

եմբեր 3-ին, ՀԲԸՄ Յովակիմեան-Սանուկեան-Դարուհի Յակոբեան վարժարաններու ԱՄՆ-ի Սանուց Միութիւնը կազմակերպեց մեր սիրելի եւ անգուգական Գասպար Տերտերեանին հոգեհանգիստն ու հաւաքը: Հակառակ «Քովիտ19» կոչուած հրէշի սարսափին, ներկայ էին շուրջ երեսուն բարեկամներ: Հաւաքը սկսաւ Սանուցի առեւտրային Վաչէ Ալեքսանեանի բացման խօսքով, այնուհետեւ յուշ-հանդիպումը վարեց Դոկտ. Մինաս Գոճայեան: Յուշեր պատմեցին Գասպարի դասընկերներէն

Armenian Observer շաբաթաթերթի խմբագիր Փրոֆ. Օշին Քելիշեան, ապա Լիբանանի ՀԲԸՄիութեան երկարամեայ վարիչ քարտուղար եւ «Նոր Օր»ի նախկին խմբագիրներէն հրապարակագիր Պրն. Սարգիս Մինասեան: Ուշագրաւ յուշերով ելոյթ ունեցաւ Պէյրութէն Նոր Ժամանած եւ այժմ Հայ Քոյրերու վարժարանի Նորանշանակ փոխ-տնօրէնուհի Տիկ. Ռիթա Պոյաճեան, եւ Պրն. Հրաչ Սեփեթճեան: Յաւուր պատշաճի ասմունքով հանդէս եկաւ Գասպարով հիացած Յովակիմեանցի ԱԼՕ (ԱԼԵՏԻՍ) Չափարեանը (Պ.ՍԵԼԱԿ, «Մարդ կայ, մարդ էլ կայ»):

«Գասպարը», ինչպէս սովոր էինք զինք կոչել, այդ հաւաքին Ներկայ էր ոչ միայն Նկարով այլ ամբողջ կեանքով, հերոսական անցեալով, միշտ հանուն մարդկային արդարութեան համար կեանքը նուիրած իր կենդանի Ներկայութեամբ:

ԳԱՍՊԱՐԸ Կ'ԱՊՐԻ՛:

There are no comments yet.